

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օպտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ա. ԱՐԲԱՌՅԱՆ 864. Վ. ՊԵՏԵՎԻԿԻ

ԿՈԶՄԻՉԵՍՔԵՐ ԿՈԼՏԻՑԵՈՒԿԻ
ԱԳՐԱԿԱՑԻՒՆ ՅԵՐԱԽԵՐ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ПОСТОНОВДЕНИЯ
Академии Наук
СССР



ԳԵՂԱՐԱՑ

1932

ՅԵՐԱԽԵՐ

338.14

17 FEB 2010

32-K
A 500

Q-16

Օ. ԱՐԱՀՈՒՄՅԱՆ ՅԵՎ. Վ. ՈՉՈՅՅԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊԵՆՔ ԿՈԼՏԵՏԵՍԱԿԱՆ
ԱՊՐՈՆՔԱՑԻՆ ՖԵՐՄԱՆԵՐ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԳՈՅԱՆՑ

1932

ՅԵՎԵՅԱՆ

19.12.2013

30360

ՄՍԻ ՅԵՎ ԿԱՔԻ ՊՐՈՒԵՏԸ

ԽԵՂՄ-ի գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը, խորհրդային ու կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպումը, հնաբավորություններ ստեղծեց լուծելու հաջի պրոբլեմը 2-3 տարվա ընթացքում:

Կուսակցության 16-րդ համագումարը գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման խնդիրները քննելիս առանձնապես ծանրացավ անասնապահության զարգացման, նրա սոցիալիստական վերակառուցման, մասի և կաթի պրոբլեմը լուծելու վրա:

16-րդ համագումարն անհրաժեշտ համարեց «արագացնել անասնապահության վերականգնման ու զարգացման համար ձեռնարկումների կիրառումը» և անասնապահության սոցիալիստական վերակառուցման համար բայլչեկիցյան տեմպեր առաջարկեց: Կուսակցության 16-րդ համագումարը միաժամանակ վորոշեց «հիմնովին վերանայել գյուղատնտեսության հենքամյա պլանը» հացահատիկային ու տեխնիկական կուլտուրաների զարգացմանը զուգընթաց՝ արագորեն զարդացնելու անասնապահությունը:

Այժմ ձեռնարկված և կուսակցության այս կարևոր գերեկտիվների անմիջական կենսագործմանը. պետության բաց թողած վարկերի խոչը մասը տրվում է անասնապահությանը՝ անասնապահության խնդիրը լուծելու համար ԽԵՂՄ-ի պետքարտելյով 1931 թվականից բաց և թողնված մեկ միլիարդ ռուբլուց ավելի:

Անասնապահության խնդիրը լուծելիս, կուսակ-

Պահպատի առարտն
Քրավիտ 7080 (Բ)
Հրատար. 2032
Պատվել 378
Տեղափ 8000



58322-67

Հանձնված և արտադրություն 20/I ԱՏ.Ձ.Ա.
Տպագրվել և 15/II

շության 16-րդ համագումարը հատկապես ծանրացավ առաջին հերքին մսի խնդիրը լուծելու վրա: Սխալ կլինի, ի հարկե, մտածել, թե դրանով հետին պլանն ե դրվում կաթի ու յուղի խնդիրը: Հենց մսի պրոբլեմի լուծումից (ամենաշատ բազմացող ու չուտ հասունացող անասունների՝ խողերի աճումից) ե կախված խոշոր և մամր յեղջուրավոր, մասնավորապես կաթնատու անասունների նախրի պահպանումն ու աճումը:

«Եսի արտադրության մեջ զիխավոր մեքենան առաջիկա տարիներում՝ խոզն ե, այստեղ պետք ե կինտրնացնել մեր ուշադրությունը, խորհրդային ու կուլտուրալ տնտեսությունների ուշադրությունը»—ասում ե Հողժողկոմ ընկեր Յակովլեվը՝ կուսակցության 16-րդ համագումարի իր զեկուցման մեջ:

16-րդ կուսամագումարից հետո, անմիջապես մենք ձևոնարկեցինք խողաբուծական խոչոր խորհանտեսությունների կազմակերպմանը. խորհանտեսություններից հետո հաղարավոր կոլտնտեսություններում կաղմակերպվեցին արդյունարերական խողաբուծարաններ:

«Եթերկորդ գործարանը, զիխավորապես կարի գործարանը, կուլին ե»— (ընկ. Յակովլեվի զեկուցումից):

Այս բանը պիտի իմանա յուրաքանչյուր կուսակցական, կոմյերիտական, յուրաքանչյուր կոլտնտեսական ու այսորվա անհատ տնտեսատեր վաղվա կոլտնտեսականը:

Հնդամյակի 3-րդ վճռական տարին պետք ե ապահովի անասնապահության զարգացման համար տարվող պայքարի հաղթանակը: Արդեն հիմնականում լուծված հացի պրոբլեմի հիման վրա ու նրա որինակով ավելի

հեշտանում ու արագանում ե մօի ու կաթի պրոբլեմի լուծումը, վոր կատարվելու յե՝ «ամենից առաջ հացահատիկային խորհնտեսություններ կազմակերպելու նախապարհով և բարձր ապրանքային կոլտնտեսական ֆերմանների մասսայական կազմակերպումով, կերի բազայի արագ լայնացմամբ»—(16-րդ համագումարի վորոշումից):

ՍՈՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՆԱՍՆԱԲՈՒՆՈՒԹՅԱՆ
ԱՄՐԱՑՈՒՄԸ ԳՅՈՒՂԱՑՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ Ե

Զնայած անասնապահական խորհրդային ու կոլեկտիվ տնտեսությունների կարճատև գոյության, անասնաբուծության հանրայինացված նախիրը մեծացավ՝ հասնելով յերկու միլիոն գլուխ յեղջուրավոր անասունի անասնաբուծական խորհանտեսություններում, 745 հազար կովի կոլտնտեսական ապրանքային ֆերմաններում, կես միլիոն խոզի «Սվինովուդի» խորհանտեսություններում, 250 հազար մայր խողի՝ կոլտնտեսային ապրանքային ֆերմաններում: Այդ նվաճումների շնորհիվ ապրանքային յուղի զգալի տոկոսն աժմ տալիս և սոյսեկտորը:

Սակայն այդ նվաճումները գեռ չեն ապահովում որ ավուր աճող մօի ու կաթի մեր պահանջը: Ահա թե ինչու զամ կէ (թ) կենտկոմի ու ԽՍՀՄ ժողկոմիորհի կողմից կուսակցական, խորհրդային, Հողային և կոլտնտեսական կաղմակերպություններին ուղղված նամակի մեջ ընկեր Ստալինն ու ընկ. Մոլոտովը զրում են, վոր՝ «զյուդատենտաւթյան ասպարիզում մոտակա ժամանակում մեր կենտրոնական խնդիրն ե՝ անասնա

բուծության սոցիալիստական հատվածը—խորհուրծականություններ ու կոլտնտեսական ապրանքային ֆերմաններ ստեղծելու և ամրացնելու աշխատանքը:

1931 և 1932 թվականներն անասնաբուծության ծավալման տապարիզում պետք է լինեն նույնական վեռական քեկման տարիներ, ինչպիսին ելին 1929 և 1930 թվականները սոցիալիստական հացահատիկային տնտեսությունների կազմակերպման քննազավառում»:

1931 թվին պետք է ամուր հիմք գցել անասնաբուծության սոցիալիստական հատվածի հետագա զարգացման համար, վարդեսղի գյուղատնտեսության արտադրության առաջին դեռ թույլ հանրայնացված արդ ճյուղում հաղթանակի, իրոք, կազմակերպված, մեջնայացված, գյուղության վերջին նվաճումների վրա հիմնված սոցիալիստական խոչը անասնաբուծյան, վորոն ապրանքային մեծ արտադրանք ունենա:

Դրա հիման վրա մեծացվում են անասնապահության համար նախատեսնված պլանները, արագացվում ե անասնակազմի համալրումը, ամրապնդվում ե կերիքագան՝ խոտհարքի, ոիլոսացման, խտացրած կերիքատրաստման պլաններն ընդարձակելով, բաց են թողնըվում լրացուցիչ վարկեր անասնապահական կոլտընտեսություններին, ուժեղացվում ե կադրերի պատրաստման գործը և այլն:

Դիմումի մեջ առանձնապես շեշտվում է այն հանդամանքը, վոր՝ «հանձնին կոլտնտեսական ապրանքային ֆերմանների և ինկուբատորա-քոչնարութական կայանների՝ գտնվել ե համբային անասնաբուծության քոչնարության այնպիսի մի ձև, վորն ամենից ավելի յէ համապատասխանում կոլեկտիվ տնտեսության զարգացման ներկա արտելային աստիճանին և վորը

6

խորհուրծական վեռական ապրանքային անասնաբուծություններ ստեղծելու խնդիրը»:

Անհատական տնտեսությունների 10-20 տոկոս և կոլտնտեսությունների սովորական հանրայնացված նախիքների 10-30 տոկոս ապրանքայնության դիմաց՝ կոլտնտեսական ֆերմաններում ապրանքայնությունը բարձրանում ե մինչև 70 տոկոս և ավելի:

Ահա թե ինչու ֆերմանները կոլտնտեսությունների ամենաշահավետ ճյուղն են և հետազայտմ դառնալու յին մեր յերկրի կարևորագույն ապրանքային անասնաբուծական մթերք արատրողները:

Հնդամբյակի յերրորդ վճռական տարում 10 հազար կաթնատնտեսական ֆերմաններ պիտի կազմակերպվեն, 1, 5 միլիոն կաթնատու կովերով, խոզաբուծական ապրանքային ֆերմանները պիտի ընդողրկեն 700 հազար մայր խոզ, թուչնաբուծական ֆերմանները՝ 10 միլիոն թոչուն:

Թե ինչպիսի տեմպերով պիտի զարգանա անասնապրանքային ֆերմանների ընարարությունը հայտանում կասենք վերջը:

ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՍՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վազուց չե, վոր կազմակերպվել են զուտ անասնապահությամբ զբաղվող բազմաթիվ խոչը կոլտնտեսություններ, սակայն նրանք կարճ ժամանակում ցույց տվին գործնականում կոլտնտեսական անասնապահության առավելությունները՝ հանդեպ մանր անհատականի:

Թվենք այդ առավելություններից մի քանիսը:

7

1. Նախ՝ կոլտնտեսության մեջ տավարի խնամքի համար ահապին աշխատանք և խնայվում:

2. Զգալի չափով կրծատվում են կառիտալ շինարարության վրա կատարվող ծախսերը (գոմերի, սիլուային կառուցումների և այլ շինարարական ծախսերը):

3. Հնարավոր և լինում լուծել ամենաայժմեական նշանակություն ունեցող կերի խնդիրը:

4. Հնարավոր և լինում զոռտեխնիկական և անառնաբուծական ճիշտ սպասարկումը կանոնավորել:

5. Արագ կերպով անասունների տեսակը լավանում է, բարձրանում ե նրա արտադրողականությունը (կաթնատվությունը):

6. Մեծանում և անասնապահության ընդհանուր յեկամուտը և ապրանքայնությունը:

7. Այս բոլորի հետեւանքով ավելանում և կոլտնըտտեսականի յեկամուտը և լավանում և սնունդը՝ համեմատած անհատականների հետ:

Հենց միայն ամենահասարակ կաղմակերպչական և աղբողոքոտեխնիկական ձեռնարկումները (գոմերը տաքացնելը, լուսավորություն անցկացնելը, լավ խնամքը, ճիշտ կերակրելը, կերն ավելացնելը և այլն) կրկնապատկում են կաթնատու տավարից ստացվող կաթի քանակը:

Մեզ մոտ կուից ստացվող տարեկան կաթի քանակը 3-4 անգամ պակաս է, քան արտասահմանում: Մեզ կը մոտ բոլոր հնարավորությունները կան՝ լավ խնամքի միջոցով յեռապատկելու և քառապատկելու կաթնատվությունը: Դա հնարավոր է, ունավորապես, լավ կերակրելու միջոցով: Հայտնի յէ, վոր մինչև հիմա ինչպես հնում, միշտ չքավոր և նույնիսկ միջակ տնտեսությունների անասունները տարվա միջամբ

ամիսները կիսաքաղց գրություն են ապրում, կամ թեկուղ հենց այն, վոր ամբողջ գյուղի նախիրն ամեն որ կարում և ասանյակ կիլոմետրից՝ արածելու և գյուղ վերադառնալու համար, իսկ հիմա, կոլտնտեսություններում այդ բացը վերանում է, ուր, ի հարկե, գործը կաղմակերպվում է, և հենց այդ պատճառով կաթնատվությունն ալվելանում է: Բարձր բերքատվությունն ապահովվում է միայն այն ժամանակ, յերբ անասնապահական մանր անհատական տնտեսությունները միանում, խոչոր կողեկտիվ տնտեսություն են կաղմում, յերբ կերաբույսերի ցանքաշրջանառությամբ հնարավոր և լինում մտցնել բաղմացյալ խոտեր, արմատապտուղներ, գուղատնտեսության այս կարեոր ճյուղի աշխատանքներն ամբողջությամբ մեքենայացնել — տրակտոր, ելեկտրականություն, կաթնամթերքների վերամշակման խոչոր, մեքենայացված գործարաններ և այլն:

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՈՒՄՆ ԱՆԲԱՎԱՐԱՐԱՐ Ե

Այդ տեսակետից չի կարելի անտեսել անասնապահական շրջանների կողեկտիվացման տեմուերն արագացնելու կարեռությունը, վորը կոլտնտեսությունների նախիրների մեծացման հիմնական միջոցը պիտի լինի:

Արտելի կանոնադրությունը չի նախատեսում սպառողական, վոչ ապրանքային անասունների համարնացումը: Զնայած դրան, կոլտնտեսություններում կաթնատու կովերի համայնացման տեմուերը համարյա հետ չեն մնում բանող անասունների համայնացման տեմուերից: Բայց և այնպես, անասունների առարկայացնությունն ունեցող մասի համայնացման ուղղութամբ 9

մինչև այժմ տարված աշխատանքներն անբավարար են : Անասունների հանրայնացման տոկոսը հետ և մնում կուլտիվացման տեմպերից :

Հայկոմկուսի կենտրոնի հուլիսյան պլենումն առանձնապես շեշտեց այդ հանդամանքը և անհրաժեշտ դտավ արագացնել կոլեկտիվացման տեմպերն այն հաշվով, վոր անասնապահական ըթաններում կոլեկտիվացումը հիմնականում ավարտվել 1932-33 թվին :

Հայաստանում անասնապահական բոլոր ըրջաններում ել համայնացրած անասունների տոկոսն անասունների ընդհանուր նախրի մեջ՝ ավելի ցածր է, քան կոլեկտիվացած տնտեսությունների տոկոսը :

Սյամես, Հայաստանի գյուղական տնտեսությունների ընդհանուր քանակից կոլեկտիվներում ընդգործված եր 27, 2 տոկոս, (առ 1-ը հուլիսի 31 թ.) մինչդեռ մոտ յերկու միլիոն գլուխ խոշոր ու մանր անասուններից կոլտնտեսությունների հանրայնացրած նախրի մեջ եր միայն 139, 132 կամ 7 տոկոսը : Կոլեկտիվների համայնացրած նախրի մեջ ե Հայաստանում յեղած ձիերի — ջորիների ընդհանուր թվի՝ 10,2 տոկոսը՝ 5428 գլուխ, յեղ՝ գոմեշների ընդհանուր թվի՝ 10,5 տոկոսը՝ 23, 887 գլուխ, կով՝ մատակների ավելի պակաս, քան 7 տոկոսը, 14,957 գլուխ, վոչխաների և այծերի 6 տոկոսը՝ 88,867 գլուխ, խօզերի 15 տոկոսը՝ 5998 գլուխ :

Սակայն անասունների հանրայնացման պատկերը շահագան և տարբեր ըրջաններում : Հայաստանի բոլոր ըրջանների մեջ այդ ասպարեզում բոլորից առաջ է Ղափանի ըրջանը, ուր հանրայնացրած անասունների քանակը ըրջանում յեղած անասունների 17 տոկոսն է, ապա գալիս և իջևանը՝ 13,5 տոկոս, Միսիանը՝ 12 տո-

կոս, իսկ այնպիսի կարեւոր անասնապահական ըրջաններում, ինչպիսին են Ստեփանալյանը, Աղբարան՝ հանրայնացրած անասունները ըրջանի անասունների ամբողջ քանակի 7 և 6 տոկոսն են կազմում միայն :

ԿԱՐԱՏԱՆՑԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԴԱՑՄԱՆ ԱՆՍԱՀՄԱՆ ՀԱՍՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես վողջ Խորհրդային Միությունը, այնպես ել Խորհրդային Հայաստանն անասնապահությունը և մասնավորապես կաթնատնտեսական անասնապահությունը զարգացնելու մեծ հնարավորություններ ունեն :

Աշխարհի և վոչ մի մասում այնքան կաթնատուկով չկա, վորքան ԽՍՀՄ-ում, բայց անբավարար կերի ու վատ խնամքի պատճառով՝ մեր կովերը հետ են մնում կաթնատվությամբ յերեք անդամ, իսկ Հայաստանում՝ հինգ անդամ : Մեզ մոտ, մինչև խոշոր կոլեկտիվ ու խորհրդային անասնապահական տնտեսությունների կազմակերպումը կաթնատուկովերին կերպել են գարմանով, լավ գեղքում՝ խոտով . ուժեղ կեր՝ հացահատիկներ, քուսպ, կովին տալը շաբաթություն և համարվել . մինչդեռ հայտնի յե, վոր քուսպի յուրաքանչյուր կելողրամի գիմաց՝ կովի կաթն ավելանում է 2, 5-3 կելողրամով : Այստեղից պարզ է, վոր հենց միայն կերի բարելավմամբ հնարավոր և բարձրացնել ատացվող կաթի քանակը 3-4 անգամ :

Իսկ կա՞ն արդյոք հնարավորություններ՝ ընդլայնելու կերի բաղան : Կասկած չկա, վոր այտ : Մեզ մոտ լայնարձակ արոտները դարեւը շաբաթուակ ոդտագործվում են ու չեն խնամվում : անհատական, կիսա-

քոչվորական տնասնապահական տնտեսությունների համար արոտների խնամքը յեղել ե ուժերից վեր և անհնարին։ միայն կոլեկտիվ ու խորհրդային տնտեսությունների միջոցով հնարավոր և արոտների խնամքն ու ռացիոնալ ողտագործումը կազմակերպել, վորը կավելացնի կերի ընդհանուր քանակը կրկնակի, յեռակի չափերով։ Հայաստանում առանձնապես՝ Ստեփանավանի, Աղբարայի, Աբարանի, Մարտունու, Նորբայազետի, Բասարգեչարի, Դարալազյաղի, Սիսիանի, Գորիսի և մյուս շրջաններում, արոտների մեծ տարածություններ կամ բոռլրովին չեն շահագործվում, կամ ողտագործվում են վոչ ռացիոնալ, անպլան ձևով։ Ճիշտ արոտաշնարարությունը հնարավորություն կտա կերի ուժեղ բազա ստեղծելու՝ մեր սոցիալիստական անասնապահության զարգացման համար։

Այսուհետեւ կերաբույսերի ցանքի տարածությունը թե վողջ ԽՍՀՄ-ում և թե Հայաստանում՝ ցանքերի ընդհանուր տարածության շատ չնչին տոկոսն և կառումում։ Կերաբույսերի, արմատապտուղների ցանքատարածության ընդարձակումը հնարավոր և դարձնում խոչըր չափով ավելացնել կերաբույսերի բերքը, վորը կապահովի անդարար և կաթի քանակին ավելացնով կերերի պաշարը։ Մինչև վերջին տարիներն ել քանի գետ անասնապահական խորհանտեսություններ ու կոլտընտեսություններ չելին կազմակերպված մեղ մոտ՝ չելին ողտագործվում բանջարանոցների, ճաշաբաների և գործարանների մնացորդները։ մինչդեռ կերի այդ մնացորդներով հնարավոր և մեծ քանակությամբ առասուներ կերակրել։ Այս տարի ծրագրված ե բանջարանոցներից, մոլախոտերից և հատուկ ցանքսերից

ստակած նյութերով ԽՍՀՄ-ում 10 միլիոն, մեղ մոտ, Հայաստանում՝ 53 հազար տոնն սիլոս պատրաստել։ Սիլոսը հյութալի, ուժեղ կեր և մեծ քանակությամբ բարձրացնում ե կովի կաթնատվությունը. սիլոսն առանձին առանձին այն դերն ունի կատարելու ինչ վոր տրակտորը գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման՝ կոլեկտիվացման գործում։

Կոլեկտիվների ու խորհանտեսությունների կաղմակերպմամբ մենք հնարավորություններ ենք ստեղծում մեքենայացնել, նոր տեխնիկայով զինել անասնապահությունը. արոտների, կերի բույսերի մշակությունը մեքենայացնել, սերգատների, մեքենայական խոցիների, ելեկտրական կիթի գործածությունը լայն չափով կիրառել, խոչոր պանրագործարաններ և յուղագործարաններ հիմնել և այլն—նոր հնարավորություններ, վոր ստեղծելում են կաթնատնտեսության զարգացման համար։

Յեթե մանր, փոքր ապրանքային արտադրանքունող անասնապահական տնտեսություններն անկայումությամբ և տնտեսական անհօւսալիությամբ կուսեցրել են մինչև այժմ կաթնապրանքային անասնապահությունը, ապա այժմ, յերբ Խորհրդային Միության գյուղադիմունքի անտեսությունների կիսից ավելին կոլեկտիվացված ե, մենք արդեն մեծ հնարավորություններ ունենք ստեղծելու խոչոր կոլեկտիվ անասնապահություն՝ ապրանքային կոլտնտեսական ֆերմաների ձևով։

Ի՞՞ՉՊԵՍ ԵՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՌԱՅ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԳ-
ՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐԸ ՅԵՎ ՎՈՐՆ Ե ՆՐԱՆՑ ԴԵՐԸ

Կոլտնտեսական ապրանքային ֆերմաները դյու-
ղատնտեսական, արդյունաբերական ձեռնարկներ են,
վորոնք ամեն որ ապրանքային արտադրանք են տալիս։
Կոլտնտեսական ապրանքային ֆերմաների մեջ ամենա-
կարեվորը կաթնատնտեսականներն են, վոր ամեն որ
պահագործարաններին կամ յուղագործարաններին
կաթ են մատակարարում։

Կոլտնտեսական այդ գործարաններն ամեն որ վե-
րամշակում են գաշտավարությունից ստացված հու-
մուրթ—կերերը դարձնելով թանգարժեք՝ մարդու
մնուցման համար ամենապիտանի կերեր՝ կաթ և մի։
Կոլտնտեսական ապրանքային ֆերմաները նմանում են
գործարանի, նրանք յեկամուտ՝ ապրանքային արտա-
դրանք են տալիս կոլտնտեսությանը վոչ թե տարեկան՝
մի կամ յերկու անգամ, ինչպես մյուս ճյուղերը, այէ
ամեն որ և այն, ինչ նրանք են արտադրում՝ անհրա-
ժեշտ և ամբողջ յերկրի, հատկապես արագ զարգացող
քաղաքների համար։

Կաղմակերպչական տեսակետից կոլտնտեսական
ապրանքային ֆերմաները կոլտնտեսության ինքնու-
րույն արտադրական մի յեխը—ճյուղն են հանդիսա-
նում, վորին և յենթարկվում դաշտավարությունն ամ-
բողջովին (անասնապահական շրջաններում), կամ մաս-
նավորապես (հացահատիկային, խառը և այլ շրջաննե-
րում), վորպես կեր արտադրող ճյուղ։

Կոլտնտեսական ապրանքային ֆերմաները լինում
են զանազան, ըստ պահվող անասունների տեսակի և
ըստ արտադրանքի։ Կոլտնտեսական ֆերմաների մեջ

ամենաառաջին տեղը դրավում են կաթնատնտեսական
ապրանքային ֆերմաները, վոր արտադրում են կաթ-
նամթերքներ, հետո գալիս են խողաբուծական, վոչ-
խարաբուծական, թոշնաբուծական կոլտնտեսական
ապրանքային ֆերմաները, վորոնք արտադրում են
հիմնականում միս, ապա բուրդ, ճարպ, կաշի և այլն։
Կաթնականում միս, ապա բուրդ, ճարպ, կաշի և այլն։
Կաղմակերպչական միս, ապա բուրդ, ճարպ, կաշի և այլն։
Վաղարանքային կոլտնտեսական ֆերմաներ կաղմա-
կերպելու համար՝ անհրաժեշտ և ունենալ։

1. Համայնացված նախիր (կաթնատութե մսատու)
ցեղական արտադրողներով և սերնդով։

2. Գոմեր և այլ չենքեր, վորոնք համապատասխա-
նեն գոտեինիկական և անասնաբուծական բուրդ պա-
հանջներին։

3. Կերի ցանքսերի տարածություն, վոր ապահովի
ֆերման ամբողջ տարվա կերի պաշարով։

4. Սիլոսային կառուցվածքներ և կերերի պահեստ-
ներ։

5. Տրանսպորտ՝ կեր հասցնելու և ապրանքային
արտադրանքը տեղափոխելու համար։

6. Կաթնատնտեսական և այլ ինվենտար (կշեռք-
ներ, ջրի, կաթի ամաններ, կովկիթներ և այլն)։

Կաղմակերպվող կոլտնտեսական ապրանքային
ֆերմաները կոլտնտեսության անբաժանելի մի մասն
են կաղմում, և վերջինների վողջ յեկամուտը մտնում
և կոլտնտեսության ընդհանուր յեկամուտի մեջ։

Կոլտնտեսության ըննեցած անասունների (կով,
վոչխար, խոզ, ճարպ) մի մասը կամ ամբողջությամբ

առանձնացվում ե ու կազմակերպվում՝ ապրանքային ֆերմա, վոր գործում ե նույն կոլտնտեսության, վորպես նրա ճյուղը՝ ընդհանուր ղեկավարությամբ։

Ֆերմաների կազմակերպման հիմնական նպատակն
ե՝ արագությամբ սոցիալատարական անասնականու-
թյունը վարդապես:

Յերկրորդ՝ առանձնացվող այդ ճյուղի վրա առանձնակի ուշադրություն դարձնելով, լավացնելով՝ անտասունների տեսակը, խնամքը, սանիտարական գրությունը՝ խոչը չափությամբ ավելանում և անասունների կաթի, մուս, բլղջի քանակը:

Յերսորդ՝ Փերմայի վողը աշխատանքները կալմա-
կերպում ենք գյուտադտնտեսության տեխնիկայի վերջին
խռոչով։

Զորբորդ՝ այդ բոլորի հետևանքով բարձրանում
և ավյալ ճյուղի ապրանքայնությունը, վորը մի կող-
մէց զրալի չափով ավելացնում և կոլտնտեսության յե-
կամտի չափը, մյուս կողմէց ապրանքային մասը՝ ար-
դյունաբերության մեջ աշխատող բանվորությանը
տալով փոխարենը մեծ քանակությամբ արդյունաբե-
րական ապրանքներ, և գյուղատնտեսական մեքնա-
ներ—գործիքներ ենք ներմուծում կոլտնաեսություն :

Ասլրանքային Փեղմաները կազմակերպվում են ու գործում կոլտնտեսության և համապատասխան (կաթոնատնտեսական, վոչխարաբուժական, խոզաբուժական, թռչնաբուժական) կոլտնտ-կենտրոնների միջև կնքվ սծագմանսագրերով:

Հստ այդ պայմանակերեւի՝ կոլտնտեսությունը
պարտավորվում է . . .

սապրանքային նախիլը՝ համայնացնելով, գնելով և կամ կուլտիներից բռնազրավված տավարը Փերմային տրամադրելով, ինչպես և բուժման միջոցով:

2. Ատեղծել կերի հզոք բազա

3. Կառուցել դոմեր, վարախներ, սլուսի հորեր,
աշտարակներ և այլ շենքեր:

4. Ճիշտ սպասարկել, խնամել ու կերպել անոռ-սպանելին:

5. Մթերող սկսական մարմիններին Կանձնել ու-
տաշըրանքի վոչ պակաս քան 70 տոկոսը (կաթ, միս,
բուքդ. և այլն):

Մասնագիտական կենտրոնն իր հերթին պարունակում է .—

1. Ապրանքայնությունը ֆերմայաւմ արտադ բարձրացնելու համար յերկարատև վարիկը հատկացնել նրան՝ անսառներ գնելու համար (նբանց արժեքի 70 տոկոսը) :

2. Գոմերի (արժեքի 40 տոկոսը) և սիլոսային կոռուպցիոնները (75 տոկոսը) ապահովել վարկերով:

3. Ապահովել աղբո-զոռակինիկական և անասնա-
բուժական սպասարկում՝ ծավալելով կոնարոլ-ցե-
ղական բնտրության աշխատանքը:

4. Կենսագործել գործառնական-արտադրական
սպասարկումը՝ կահավորություն, ինվենտար, շինա-
նյութ մատուկաբարելը, կաթի վերատվակումն ու ար-
տադրանքի սպառումը:

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ
ՀԱՏԿԱՆՔՆԵՐԸ

կորսունական առլրանքային վերթաները պետք են գետեցալ Հատկանիշներով առօնիքորդական կու-

անսահեական համայնացրած նախիրներից :

1. Մեծ ապրանքայնությամբ (որինակ՝ առբուզ կիթից ստացված կաթի 70 տոկոսից վոչ ողական) :

2. Սեփական կերերի սուստությամբ :

3. Արտադրողականության բարձրացմամբ, (յուրաքանչյուր կովից կիթլող կաթի մեծ քանակությամբ՝ համեմատած շրջակա կոլտնտեսությունների հետ) :

Առանց այդ հատկանիշերի՝ կոլտնտեսական ապրանքային ֆերման կաթի և մոխ խոհական դործարան հաշվել չի կարող:

Խորհրդային մյուս հանրապետությունների (ուր մի տարուց ավել ե, ինչ գործում են ֆերմաները), այս մի տարվա փորձը ցուցյ տվեց, վոր կաթնապրանքային ֆերմաներն իսկապես կարող են և տալիս են կաթի ընդհանուր քանակից 70 տոկոս և ավելի ապրանքային կաթ։ Գետք և անողոք պայքար մդել կուլտակային այն տեսդեմների դեմ, վորոնք դեմ են ֆերմաների ապրանքայնությունը բարձրացնելուն, վորոնք ցանկանում են փակել կոլտնտեսական ֆերմաների զարգացման ուղին։

Մեզ մոտ կաթնատնտեսական ֆերմաներում կազմակերպչական շրջանի վերջում նախատեսվում ե կովի տարեկան կիթը հասցնել, միջին հաշվով, 2600 կիլոդրամի, վորք չորս անգամ ավելի յև մեր կովերի այժմյան կաթնատությունից։

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐԻ ՆԱԽՐԻ

ԿՈՄՊԼԵՔՏԱԿՈՐՈՒՄԸ

Յուրաքանչյուր կոլտնտեսություն, ապրանքային ֆերմա կազմակերպելու, ամենից առաջ պիտի մտածի համապատասխան քանակով անասուններ ձեռք բերելու մասին։

Կոլտնտեսական ապրանքային ֆերմաների ապրանքային նախիրը համալրվում է հետեւյալ աղբյուրներից : —

1. Ապրանքային ֆերմաների ամբողջ նախրի մեծ մասը (վոչ պակաս 60-70 տոկոս) պիտի համարվի ի հաշիվ համայնացրված և նոր համայնացվող կովերի, ցուլերի, հորբերի, խոզերի, վոշխարների և այլն։ Կոլտնտեսության հին ու նոր անդամների անասունների համայնացումը ֆերմաների նախիրը կազմակերպելու հիմնական աղբյուրը պիտի հանդիսանաւ։

2. Նոր, գլխավորապես տղնկացեղ անասունների գնմամբ կուտնակենարուների բաց քողած պետական հասուլի վարկերով։

Ապրանքային ֆերմաներում ընդհանրապես այս աղբյուրից ստացված տավարի քանակն ամբողջ ապրանքային նախրի մեջ 20-25 տոկոսից չպիտի անցնի։

Վարկերը տալիս են կաթնակոլտնտեսակենարունի, խոպարուծական, վոչխարաբուծական, թռչնաբուծական կոլտնտեսակենարուների մազորությունները՝ զնվող անասունների արժեքի 70 տոկոսի չափով, իսկ անասունների արժեքի 30 տոկոսը պիտի լրացնի կոլտնտեսությունների սեփական միջոցներից, առանց այդ պայքարմի վարկեր բաց չեն թողնվի։

3. Մյուս աղբյուրը կոմպլեքտավորման համար աղնկացրած և լավացրած հորբերի, գննիների, գառների կոնսորակտացիան և կոլտնտեսության և անհատական չփակության միջակ տնտեսությունների և անհատական համականականների հետ, վորոնք չափ կաթ տվող կովեր կամ լավորակ խոզեր, վոչխարներ ունեն։

4. Մյուս միջոցը՝ մատղաշ անասունների խնամքն է, բուծումը հենց կոլտնտեսության մեջ։ Մատղաշ ա-

նասունների բուծումից ե կախված ամբողջ նախրի վերաբուժությունը, արագ աճը: Ամեն տարի կովերի քանակի ամենասպակասը 35 տոկոսի չափով հարթեր, խողերի քանակի 80 տուկոս, դոճիներ և վոչսարների քանակի 50 տոկոսի չափով գառներ կարելի յե ավելացնել ազգանքային ֆերմանների նախիրներում, հունիսում:

5. Անասնապահական ֆերմաններին պիտի հանձնվեն համատարած ըրջաններում կուլտներից բնադրաված բոլոր անասունները, յերբեք թույլ չպիտի տրվի կուլտակներից գրաված անասուններն ազատողական նպատակների հատկացնելը կամ բաժան բաժան անելը կուլտականների մեջ:

6. Բացի այդ հիմնական աղբյուրներից, վոչ այնքան քանակն ավելացնելու, այլ վորակը լավացնելու համար կոլտնտեսությունները յուրաքանչյուր տարի իրենց հոտերի վատորակ, անպետք կովերն ու այլ անասունները պիտի փոխեն Սոյուզմասոյի անասունմթերման կայաններում լավորակ անասունների հետ:

Այս բոլոր աղբյուրների մասին լայն ծանոթություն պիտի ունենան կոլտնտեսություններն ու կոլտնտեսականները, յուրաքանչյուր կոլտնտեսություն պետք է սպառագրծի բոլոր հնարավորությունները՝ արագ կոմպլեքտավորելու անասնակազմը, վորակեսդի հնարավոր լինի վորքան կարելի յե շատ հիմնել, այնքան շատ ուղարկեալ ապրանքային ֆերմանները:

ՊՍ.Յ.Ք.Ա. ԱՊՐԱՆՔԱՅՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Սորհրդային Միության բոլոր ծայրերում արդին այժմ մենք ունենք հազարավոր կոլտնտեսական ֆերմաններ, ուր համայնացրած կաթուառու նախրից սուսց-

ված ամբողջ կաթի ու տողարց ավելին, վորակս ապրանքային արտադրանք, հանձնում են պետությանը:

Կաթնատնտեսական ապրանքային ֆերմաններից դատ, մյու ապրանքային ֆերմանները նույնպես կարող են տալ և ավել տոկոս ապրանքային արտադրանք:

Հյուսիսային Կովկասում կանանց ճագարաբուծական կոմմունան որական միքանի հարյուր թանկարժեք ճագար և հանձնում մթերող որգաններին:

Սակայն նույնը չի կարելի ասել Հայատանում զոյություն ունեցող ֆերմանների մասին: Ճիշտ ե, մեր կոլտնտեսական ֆերմաններում ապրանքայնությունը 4-5 անգամ բարձր ե սովորական կոլտնտեսությունների հետ համեմատած, ինչպես և 7-8 անգամ ավել անհատական տեսեսություններից, սակայն միջին հաշվով 30-40 տոկոսից չի անցնում, չնայած այն հանգամանքին, վոր անասունների քանակի, ֆերմանների խոշորության տեսակետից Հայատանի մի շարք գյուղերում կան շատ խոշոր ֆերմաններ:

Ահա թե ինչու մեզ մոտ պետք է վճռական պայքար տարվի կոլտնտեսական ֆերմաններում ապրանքայնությունը բարձրացնելու համար: Անհրաժեշտ ե, վոր կոլտնտեսությունները նոր կազմակերպվող ապրանքային ֆերմաններն անմիջապես գործի լծեն, քանի վոր յուրաքանչյուր որ ուշացումը կասեցնում է մեր սոցիալիստական անասնապահության գարգացման թափը:

Ֆերմանների կազմակերպումը, ապրանքայնության բարձրացման հետ կլոծի կաթի ու մսի պրոբլեմը, ապրանքային ֆերմանները վոչ միայն պիտի փոխարինեն միլիոնավոր կուլակային և ուռացած տնտեսություններին, վորոնք անցյալում գլխավոր ապրանքային կաթ, յուղ և միս արտադրողներն ենին, այլ և պիտի դերակատարեն նախատեսված պլանները:

ԿԵՐԻ ՀԶՈՐ ԲԱՋԱՆ ՍՏԵՂԾԵԼԻՌ
ԱՆՀՐԱԺԵՇՈՒԹՅՈՒՆԸ

Կոլտնտեսությունները պետք ե ստեղծեն կերի ոռ
մուր բազա և հասնեն կաթնատվության ավելիք բարձր
չափերի։ Առաջիկա տարում անասնապահական շրջան-
ների եկոնոմիկայի մեջ շրջադարձ պետք ե կատարեն
մեր կոլտնտեսությունները՝ վորզ գաշտավարությունը
ի սպաս դնելու տնտեսության հիմնական ճյուղի՝ ա-
նասնապահության զարգացմանը, խոշոր, գերակշռող
տեղ տալով՝ խոտարույսերին, արժատապատռուներին,
սիլոսային կուլտուրաներին, ստեղծելով այդպիսով
ապրանքային ֆերմաների զարգացման համար հիմնա-
կան նախապայմանը հանդիսացող կերի ուժեղ բազա։

«Վորպեսզի լուծենք մսի ու կաթի գործածությունը
կրկնապատկելու խնդիրը, կերի պաշարը մեր յերկրում
անհրաժեշտ ե մեծացնել մեկ ու կես անգամ։ Զպիտի
մոռանալ, վոր մեր հիմիկվա կերերի յերկու-յերրորդից
ավելին կոչտ կերեր են, մինչդեռ մսի ու կաթի մեքե-
նայի արդյունավետ աշխատանքի համար պահանջում
ե յերկու-յերրորդ ուժեղ, հյութալի կեր» (ընկ. Յա-
կովլեվի գեկուցումից՝ 16-րդ կուսհամագումարում)։

Ամեն մի կոլտնտեսություն ինքը պիտի ապահովի
իրեն անասուններին հյութալի ու չոր կերերով, յուրա-
քանչյուր կոլտնտեսություն իր պլանի մեջ պիտի մտցնի
կերի հատուկ կուլտուրաների ցանքի ընդարձակված
պլան, յուրաքանչյուր կուեկտիվ հույսը դըսի ողնու-
թյան վրա չպիտի դնի, և ինքը պիտի հավաքի իր հա-
մար սերմացու, պիտի ոգտադործել արդունները, խոտ-
հարքերը, հնձիլ ինչ վոր պիտանի յե կերի համար,
թույլ չտալ, վոր անողտադործելի մնան մոլախոտերը,

կերի թավթփուկները, և ինչքան կարելի յե շատ սի-
լու պատրաստել։

Այս տարվա խոտհնձի ոլլանների գերակատարումը
չայստանի համարյա բոլոր ջրաններում ցույց տվեց,
թե ինչպես բուշելիկյան պայքարով կոլտնտեսություն-
ները կարող են լուծել կերի պրոբլեմը։ Անհրաժեշտ և
նույն թափով առաջ մղել և սիլոսացման դործը և գե-
րակատարել այն, արագացնել ու ժամանակին ավար-
տել կերարույսերի համար աշնան վարը, ձեռնարկել ա-
րատների, մարդագետինների բարելավմանը և նախորոք
հոգալ ու ապահովել կերարույսերի ցանքը սերմացլով։

Կերի բազայի ամբապնդման խնդրում հասուկ ու-
շաղը ության առարկա պիտի լինի սիլոսը։ Ալոսը պա-
հածո, թթվեցրած, հյութալի կեր և ու մեծ չափերով
ավելացնում ե կովի կաթնատվությունը։ Սիլոսն ա-
նասնապահության մեջ հեղափոխիչ դեր ունի. մի հեկ-
տար արեածաղկից սիլոս պատրաստելով՝ ստացվում ե
կերի 3 հազար միավոր, մինչդեռ նույն հեկտարի վրա
հացարույսերից ստացվում ե միայն կերի հազար միա-
վոր։ Սննդարար նյութերը, խոտի մեջ հավաքելու և չո-
րացնելու դեպքում կորչում են 25-30 տոկոսով, իսկ
սիլոս պատրաստելու դեպքում՝ միայն 5-25 տոկոսով։

Պիտի ՊԱՅՔՄՐԵԼ ՇԻՇՏ ԿԵՐԱԿՐՄԱՆ ՈՒ ԲԱՐՁՐ
ԿԱՐՄԱՏՎԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Կերի բազայով անասնապահական ապրանքային
ֆերմաներն ապահովելուց հետո, նույնքան և դեռ ա-
վելի մեծ նշանակություն ունի անասունների կերակ-
րումն ու խնամքը։ Նախ՝ կերի քանակը —

«Վորպեսզի կովը կարի ներկա հանակը (հազար
կիլոգրամ տարեկան) տա, պահանջվում է 1700 կերի

միավոր : Վորպեսզի այդ նույն կովը կար սա կրկնակի քահակավ՝ պարզվում է , վոր կերի միավորների քանակը պետք է ավելացնել միայն 30 տոկոս և վոչ թե կըրկնապատկել , ինչպես կարող է թվալ առաջին հայացքից . խոկ վորպեսզի կարի քանազը յեռապատկիր՝ կերը պիտի մեծացնել միայն 60-65 տոկոսով»— (ընկ . Յակովիկի ճառից՝ 16-րդ կուռհամագումարում) : Այս պարզ ուրենքը պետք է լավ յուրացնեն կոլտնտեսությունները և մեծ ուշադրություն դարձնեն անասունների կերակրմանը : Բացի քանակից , անհրաժեշտ է բարելավել կերի վորակը : Հյութալի կերերը (արմատապտուզներ , սիլոս) կաթնատլությունը բարձրացնում են : Մի հեկտար յոնջան կանաչ կամ սիլոսացած վիճակում՝ տալիս ե 3 ու կես—4 անգամ ավելի կաթ , քան ծաղկած ժամանակ կամ ծաղկելուց հետո հնձածը : Մեծ ոգուտ կտացվի և այլ ուժեղ կերերի (քուսպ , ալյուր և այլն) գործածության դեպքում :

